



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագիրն իրականացվում է ՀԲԸՄ կողմից՝ ԵՀՀ-ի հետ համագործակցությամբ

WIKIMEDIA
ARMENIA

Վիքիակումբների ծրագրի համակարգող

Վիքիմեդիա Հայաստանը Հայկական բարեգործական ընդհանուր միության «ՔՀԿամուրջ» ծրագրի դրամաշնորհի շրջանակներում Հայաստանի 5 մարզերում հիմնում է Վիքիակումբներ և ծրագրի իրականացման համար փնտրում համակարգող: Վիքիակումբը ոչ ֆորմալ կրթության օղակ է, որի այցելուները հիմնականում դպրոցականներն ու երիտասարդներն են, որոնք ակումբում սովորում են խմբագրել Վիքիպեդիայում և այլ վիքիսախագծերում ինքնակրթվելով և անընդհատ կատարելագործելով իրենց սովորելու հմտությունները:

Տևողություն՝ 12 ամիս

Մեկնարկը՝ մայիս 1, 2018

Հաստիք՝ 0.5 դրույք

Վայր՝ Երևան, Հայաստան, Վիքիմեդիա Հայաստանի գրասենյակ

Պարտականություններ՝

- Համակարգել Վիքիակումբների և դրանց համակարգողների ամենօրյա աշխատանքը, վերջիններիս աջակցել առաջացած հարցերի լուծման մեջ:
- Համակարգողների հետ կազմակերպել օնլայն և օֆլայն պարբերական հանդիպումներ:
- Այցելել Վիքիակումբներ և տեղում ծանոթանալ գործունեությանը:
- Կազմակերպել Վիքիակումբների ազդեցության նախնական և վերջնական գնահատման աշխատանքները:
- Կազմակերպել առցանց մրցույթներ ու խմբագրման միջոցառումներ:
- Յուրաքանչյուր ամիս կազմել և ներկայացնել Վիքիակումբների գործունեության հաշվետվություն:
- Ծրագրի ավարտին ներկայացնել ամփոփիչ հաշվետվություն:

Պահանջվող որակավորումներ՝

- բարձրագույն կրթություն,
- հայերենի և անգլերենի գերազանց իմացություն,
- համակարգչային գերազանց գիտելիքներ, Google G-Suite-ով (Google Docs, Spreadsheets և այլն) աշխատելու, աշխատանքային նամակագրություն վարելու, փաստաթղթերի հետ աշխատելու ունակություն,
- ծրագրերի համակարգման փորձ,
- պարտաճանաչություն, արագ սովորելու և կողմնորոշվելու ունակություն,
- հաղորդակցության և թիմում աշխատելու հմտություններ,
- Վիքիմեդիա նախագծերում խմբագրելու և Վիքիմեդիա Հայաստանում կամավորական փորձը կոհտվի որպես առավելություն:

Դիմելու կարգը՝

Պահանջներին համապատասխանող բոլոր թեկնածուներին խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) և մոտիվացիոն նամակը մինչև ս.թ. ապրիլի 18-ն ուղարկել info@wikimedia.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի տողում նշելով «Վիքիակումբների ծրագրի համակարգող» բառերը: Նախնական ընտրությունն անցած անձինք կիրավիրվեն հարցազրույցի: